36. ՁՈՐԱՆ ՓԱՇԵՆ

Ժամանակով թագավորըմ կէղնի։ Էդ թագավոր կէլնի ուր սադրազամին կասե.—Ես միտք ունիմ հ'էլնիմ իմ հ'էրկրի մեջ օլորտիմ, տեսնամ իմա՞լ է իմ ժողովուրդ, իմալ չէ, դու լէ պետք է ղքու թադարուկ տեսնաս, հ'իգաս իմ հետ։

Սադրազամ կասե.—Թը՛ղ էղնի։

Զուրանց թադարուկ կտեսնան, կփոխին ղուրանց շորեր ու կէլնին կրնկնին ճամբախ։ Դարվեշ խըլըղի հագան, օր ղուրանք մարդ չճանչնեբ, ասին թե՝ թագավորն ու ուր սադրազամ հ'էլեր ին կօլորտին ժողովրդի մեջ։

Տասն ավուր ճամբախ մարգեր կիգան, իսկի շենլըկի հ'ըռաստ չըն իգա։ Օրըմ մութ տվեր էր վըր ուրանց, ուրանք լէ դուրս մնալուց բեզրեր են։

Թագավորն ասեց սադրազամին.—Սադրազա՛մ բարա, օտք վերուր, բալքիմ հ'էսօր շենլըկ մը հասնինք։

Խաստ էրին գացին քիչըմ տեխ, տեսան կրակըմ կերևեր, գացին ղուրանք թալին էդ կրակի խեչ, տեսան օր չորանըմ կեր հ'ոդի, առեր էր զկուլապ ու պպզի կրակի դեմ, էնդին լէ թողէր էր ղուր օչխըրներ կարծեն։

Բարև տվին։ Ջորան ղբարևն առավ, հ'էլավ, պարզեց ղուր

կուլապն ու էկան նստան։ Եբ նստան, խըլըսան, թագավորն ասեց.
—Հովի՛վ ախպեր, մսաֆըր կպահի՞ս։

Հովիվն ասեց.—Դարվե՛շ բաբա, մսաֆըր օր կա՝ աստծու մսաֆըրն է, հ՚ո՞րի չըմ պահի, վըր իմ գլխուն ու աչքերուն կպահիմ։

Դարվեշն ասեց.—Հովի՛վ, վըրա չբռնես, հ՚էսօր տասն օր մենք ճամբախ կիգանք, հաց չընք կերի, հաց կա՞, քիչըմ բերես մզի ուտինք։

Հովիվն կասե.—Դարվեշ բաբա՛, հ՚ո՞րի չկա, գուք սաղ մնաք, հաց լէ բոլ կա, կաթ լէ։

Վազեց բռնեց մաքիմ՝, քթոցըմ կաթ կթեց, բերեց տվեց դարվեշին։ Դարվեշն ու ուր ընկեր թամիզ մը նստան, բրդեցին զուրանց հացեր մեջ, կերան հ՚էլան կանան։

Պառկան, քնան լուսուն հ՚էլան։ Լուսուն օր հ՚էլան ու արև առավ վըր հազըրներուն, թագավորն ի՞նչ տեսնա աղեկ է։ Իշքեց տեսավ, էդ տեխ ծառըմ կեր հովվի կշտի հետ։ Ծառուց էրկու սպանուկ շուն կեր կախուկ, էրկու հատ, հեռի լըսողաց մոտեն, թուլա լէ նստուկ են ծառու տակ։ Քիթ ուրանց վերցուցեր են վի ու բանձրանց զէդ շըներ կիշքեն։

Թագավորն ասեց սադրազամին.—Սադրազամ բաբա, հ՚էլի տեսնանք էգա ի՞նչ է։

Սադրազամ հ՚էլավ իշքեց։ Օր հ՚էլավ իշքեց, ասեց.—Թագավոր ապրած, էգա հովվից չհարցո՞ւնք, թե զէդ շներ հ՚ո՞րի բերեր է կախի հ՚ողի, էգա թուլեք ի՞նչ ին։

Թագավորն ասեց.—Կրանա՞ս՝ հարցու։

Հովիվ լէ հ՚էլեր էր քնուց, զուր հալավ կհագներ, սադրազամն ասեց.—Զոպան ախպե՛ր, էդա ի՞նչ շուն ին կախուկ ծառեն։

Հովիվն ասեց սադրազամին.—Դուք գացեք խուրբան էղեք իրիկվան հացին, օր կերաք, թը չէ՝ զգոբալ կվերցընենք զէրկուքդ լէ կդնենք էն շներու խեչ, դուք հ՚որի՞ պիտի հարցուք զէդ բան հ՚իսնե, էդի ձըր բերնին չհընկեր է։

Թագավորն ասեց.—Աղեկ չէրինք հարցուցինք, էդի ի՞նչ դինա ես թագավորն իմ, դու լէ սադրազամն իս, գինա դարվեշ ինք։ Հ՚էլնինք էրթանք նստինք մըր տեխ, նոր կանչինք բերինք հարցունք։

Սադրազամն ասեց.—Էդի վըր հ՚ըմնուն աղեկ ասեցիր, հ՚էլնենք էրթանք։

Թագավորն հ'էլավ բարեմնաց էղավ հովվից, հարցուց ասեց. —Դու վի՞ր հովիվն իս։

Էն լէ ասեց.—Ֆըլանքյասին։

Ձդեղի անուն լէ հարցուց, գրեցին զհովվի անուն, դրին ջեբ ուրանց, հ'էլան հ'ընկան ճամբախ, էկան։ Էկան ուրանց տեխ նըստան, հ'էլան լուսուն, թաղավոր ուր մարգերուց մեկըմ կանչեց։

Ասեց.—Կէրթաք ֆըլան քաղաք, քաղքի մոտ էգա անունով գեղըմ կա, գեղի մեջ հըմլա տունըմ կա, զէնդոր հովիվ կառնես, կիգաս ընծի։

Թագավորի մարդն է, էկավ հարցուց զէդ գեզ, գտավ զմարդու տուն, առավ զհովիվ ու գնաց։ Ասեց.—Քելե էրթանք, զքզիկ թագավոր կկանչե։

Հովիվն զուր հ'ինք զարկեց էս դին, էն դին, յախա չկոցավ աղատեց.—Ես ի՞նչ գինամ թագավոր որն է, իմ մամուց էղեր իմ՝ զթագավոր չըմ տեսի։

Մարդն էձգեց հ'առեջն ու առավ էկավ։ Էկավ հ'էլավ թագավորի մոտ։ Թամանա էղավ։

Թագավորն ասեց.—Բարով իս էկի գո՛ւ, հովիվ ախպեր։

Հովիվ քաշվավ մեկ կողմ, կանավ։

Եբ քաջվավ մեկ կողմ, կանավ, թագավոր վերուց ասեց.— Հովի՛վ, դինա՞ս զքզիկ հ'որին իմ կանչի։

Հովիվն ասեց.—Ես ի՞նչ գինամ։

Թագավորն ասեց.—Քու միտք կիգա՞ օր ֆըլան օր էրկու դարվեշ էկան քու խեչ, գիշերըմ մանցին քու մոտ, դու հաց ու կաթ տվիր էնդոնց, կերան, լուսուն օր հ'էլան, էն մեկ դարվեշն հարցուց, ասեց. «Էգա շներ հ'որի՞ն իս կախի ծառենդ։ Դու հերսոդար։

— Շատ աղեկ, միտքս հմկա հ'ընկավ։ Է՛հ, զիս հ'ո՞րին իս կանչի։

— Զքզիկ կանչեր իմ օր էն շներու էղելութեն թարիֆ էնես ընծիկ. զէն ջուխդակ շուն հ'ո՞րին ես կախի ծառեն, էն թուլեք հ'որի՞ զուրանց քիթ կբանձրցուն, կիշքին ծառվընե։

Հովիվն ասեց.—Ի՛նչ, կասիս, էն օր դարվեշ էր ու հ'էսօր էղեր ես թագավոր, ճամբիր բերիր զիս օր վախենամ ասիմ. զիմ գլուխ լէ կտրես, չը՛մ ասի։

Սաղրազամն ասեց.—Թագավո՛ր ապրած, հովիվ ու անգետ մեկ ին, էդի սարու մարդ է, հըմլա զորով էդոր բերնեն խոսք չը-

կըռնանք փրթունք, ուրիշ իտանք գործըմ, բալքիմ քիչ-քիչ քակինք զինք։

Թագավորն ասեց.—Շատ աղեկ կասես, ըի էնինք փաշա, ճամբինք էրթա Մսրա հ'էրկիր կռիվ. ախըր մզիկ յոթ փաշա, էղավ իրեք տարի, կա էնդին, մեկ լէ էդի թըղ էրթա, էղնի ուր։

Բերին էրին փաշա, ճամբին գնաց Մսըր, հասավ յոթ փաշին։ Ջանուն լէ փոխին, դրին Զորան փաշա։

Զորան փաշեն է, լուսուն հասավ, հ'իրկուն առավ զՄսըր։ Հ'իրկուն հասավ, լուսուն առավ, հեչ յաման աթլա չտվեց, զարկեց էն գլխեն, էն գլխեն հ'էլավ դուրս։

Հէլան էդ յոթ փաշենն է, հ'իրարու ասին.—Մենք իմալ էնինք, օր լսե թագավոր, էդա մարդ հ'իրկուն հասավ, լուսուն ալթ էրեց զՄսըր, լուսուն հասավ, հ'իրկուն ալթ էրեց, խերն հաղ կտանե զմզիկ թալե ծով։

— Ի՞նչ էնինք, ի՞նչ չէնինք, հ'էլնինք դիրըմ դրինք թագավորին, թե. «էդա մարդ օր դու ճամբեր իս էկի, ինքն ու Մսրա փաշեն զխոսքերնին մեկ ին էրի, օր հ'իգան, բռնին քու քաղքի վրեն, ինչ կէնիս էրե, շո՛ւտ էրե»։

Գիրն օր էկավ, թագավոր կարդաց, տեսավ բալե էդա ուր մարդ օր էրեր էր փաշա ճամբի Մսըր, զխոսքն մեկ է էրի Մսրա փաշի հետ, իգա բռնե ուր վրեն։

Հ'էլավ գլխոց վրա, ուր մարդերուց մեկըմ ճամբեց, էկավ Մըսըր, ասեց.—Կէրթաս, լուսուն կհասնիս, հ'իրկուն կհասնիս, լուսուն կառնիս զՋորան փաշեն կիգաս։

Թագավորի սային օր հասավ Մսրը, էկավ հ'էլավ Զորան փաշի հ'էրես։ Ասեց.—Ես էկեր իմ քու հ'էտև աճալա-աճալա թագավոր կուզե զքզիկ. ընծիկ ասեց՝ «Զգլուխ հ'ոնի թոչե, հ'ոդա կընդե, չկանի հա՝, օր հ'իգա»։

Զորան փաշեն հերսոդավ, ճըլօթըմ զարկեց էդ սայուն, վիզ դառցավ հ'ետևանց։ Ասեց.—Ես հալա հ'իրկուն էկա, ի՞նչ շուտ թագավոր զիս կարոտցավ ու կանչեց, հալա ընծիկ դրե Մսրա բալնըքներ թասլիմ չըն էրած։

Սային դառցավ, էկավ հ'ետևանց։ Ասեց.—Իմալ օր դրած ին փաշեք, հըմալ է, պակաս ին գրած, դրե հ'էվել չըն գրած։ Ես օր գացի ասի զքզիկ թագավոր կկանչե, ճըլօթըմ զարկեց, ընծիկ թոփի ձեն տվեց։

Գանգատ մը լէ էն էրեց։

Էդ մարդըն օր հետ դառցավ, Զորան փաշեն քիչըմ ինքն ուրեն մտածեց, ասեց.—Ջանը՛մ , ես հ՚էրեկ չէ մըկլ օր էկա թագավորի խեչեն, էդ ի՞նչ շուտ զիս կարոտցավ, կարելի է թագավոր չճամբեր է, էդ մարդ ուր գլխուն է հ՚էլի էկի։ Բըլե իմալ կէղնի կա ու չկա էմ լէ էդա փաշեք թավտանութեն ին էրի վըր ընծիկ։ Ես պիտի հ՚էլնիմ էրթամ դեմ թագավորի մոտ, չէրթամ՝ իմ բան բուրդ է։

Հ՚էլավ լուսուն զուր բար տվեց թագավորին ու էկավ։ Էկան ասին.—Թագավո՛ր, չա՞սիս օր Զորան փաշեն էկավ։

Օր էկան ասին, Զորան փաշեն էկավ, ոիրդան վերուց ասեց. — Իմ հ՚էրես չհանեք, կանչեք զշալատչիք, թըղ տանին զգլուխ զարկին։

Ջալատչիք էկան զՁորան փաշեն հ՚իջուցին ձիուց, բռնեցին ղձեռք, առան կտանեն օր զգլուխ կտրեն։

Ասեց Զորան փաշեն.—Գացեք թագավորին ասեք՝ Զորան փաշեն կասե. «Հիվի կէնիմ ուր օտաց մոտեն, զիմ գլուխ չզարկե, թըղ կանչե ուր հ՚առչև, ղէն շներ ու ճուհարն իտամ ուրին, սորա զիմ գլուխ թըղ զարկե»։

Հ՚էլան գացին ասին թագավորին.—Զորան փաշեն հըմլա կասե։

Ասեց.—Գացեք բերեք զաթի էն մարախն է մըշ իմ սրտին։

Զորան Փաշեն էկավ հ՚էլավ թագավորի հ՚էրես, բարև տվեց, բարև առավ ու նստավ։ Օր նստավ, վերուց ասեց.—Թագավո՛ր ապրած, իղին կիտա՞ս օր խոսամ։

Թագավորն ասեց.—Իղին է։

—Թագավո՛ր ապրած կէնա, ես օր իմ մամուց էղեր իմ ու չէղեր իմ, հովիվ իմ էղի։ Ես շան լեզու կհասկընենք, հավորեքի՝ կհասկընենք, շանավըրի՝ կհասկընենք, մարդու՝ կհասկընենք։ Օղորդ օր ես հովիվ ենք, էն էրկու շուն կպահեն զիմ օչխար, մեկ կընկներ հ՚առեջ, մեկն հ՚ետև՝ կտանեն զօչխար, արծեցնեն ու տանոց տան կառնեն կիգեն վըր քթոցին, ես իսկի չընք էրթե։

Ավուրըմ մեկ, գիշեր էր, ես քներ ենք, անձրևմ՝ կիգեր՝ աստված հեռուն արասցե, մարդ կիներ ջրհեղն էր. դուրս լէ, հըմալ մութ էր օր մատ խոթեր մարդու աչք, չտեսներ։ Էնդիեն տեսա օր քառսուն գել էկան, զօչխար օր տեսան, հ՚իրարու ասին՝ էրթանք էդա օչխրի մեջ. ես հասկըցա. չէ՝ կհասկնենք զէդոնց լեզուն։

Էդ հըմալ օր ասին, մեկն վերուց ասեց.—Ախպե՛ր, չէրթա՞նք, էդի ֆըլան հովվի օչխարն է, էնդոր շներ գելխեղդ ին, հանդե

կխեղդին զմզիկ, չընք կոնա փախնի էրթա, էկեք դառնանք էրթանք հետ։ Գիլանք օր դարձան հ՝ետևանց կէրթեն, ես լսեցի օր շներ հ՝իրարու ասին «Թագավոր ապրած, ականջդ դիտավեր պահե։ Հ՝էլնինք էրթանք հ՝ընկնինք մըր տիրոջ օչխրի մեջ, մեկ-մեկ թըղ էղնի ուրանց, մեկ-մեկ հատ լէ՝ մղիկ։ Թըղ խեղդին թալին գետին, թորկին էրթան, օր մըր տեր իտա լուսուն մղիկ, ուտինք»։

Հ՝էլան հ՝ընկան գիլանու հ՝ետև հասան, ասին. «Հ՝առջի մարդու բախտ ու խըրար էղնի, օր ձզիկ բան չասինք, էկեք մեկ-մեկ դուք կերեք, մեկ-մեկ խեղդեք թողեք մղիկ, թողեք գացեք»։ Էդ հըմալ օր ասին, գիլանք դարձան էկան մտան օչխըրի մեջ, քառսուն հատ ուրանք կերան, էրկու հատ լէ էրկու ջան հ՝ապով խեղդեցին, թալին գետին, թողին գացին։

Առավոտ օր բացվավ վըր ձզիկ ու հազըրներուն, օչխար հ՝էլավ, օր քաշվի էրթա սար։ Օչխար քաշվավ, ջուխտակ շուն տեխե ուրանց չխըլվըլացին, չէ՞ ջանդրկի հոտ են առած, կիշքեն հ՝իրար ու կճըմըլդկեն։ Էդոնք օր կճըմըլդկեն, վերցի ղգոբալ ու էկա էդոնք սպանեցի, դրի գետին։ Զըր հերն ու մեր շուն էղնին օր ձըր միտք միս էր հ՝ընկի, թըղ ասեք ընծիկ, էրկու ջանդակ ես կիտենք ձզիկ, դուք հ՝ո՞րի զգիլանք բերեք թողեք մըջ իմ օչխարին։ Օր սպանի, բերի զէրկուս լէ ծառեն աղեկըմ կախեցի։ Հ՝էլա գացի ուրիշ էրկու շան լակոտ բերի գրիմ օչխըրի հ՝առեջ։ Սորվեցուցի զէդոնք, օր ինչ խըդար կդառնան կիգան, հ՝իգան նստին ծառու տակ ու իշքին ջուխդակ շան ջանդրկի վրեն, հեղըմ լէ, հըմալ բեբախտութեն չէնին վըր ընծիկ։ Օր զուր խոսք խըլըսցուց, դարձավ վըր յոթ փաշեն.—Հըմկա՛,—ասեց,—քու յոթ փաշեն է։ Էգա իրեք տարի էղավ գացեր ին նստի էն տեխ, չըն կըռնե օր առնեն, ես հ՝իրկուն հասա՝ լուսուն առա, լուսուն հասա՝ հ՝իրկուն առա, դրու քաղքի բալնըքներ թասլիմ չըն էրած են ընծիկ, հ՝էլեր ին թավդանութեն ին էրի վըր ընծիկ, ի՞նչ է՝ չըմ դինա, դու լէ ականջ էր էրի, հ՝էլեր էր մարդ ճամբի իմ հ՝ետև, ես ասի. «Ջանը՛մ, էրկու օր կէնե օր ես էկա, թագավոր ի՞նչ շուտ կարոտցավ զիս, ճամբեր է, կկանչե, չէլա էկա, ճըլօթըմ զարկի քու սայուն, դարձուցի հ՝ետևանց։ Վերջ գուշունմիշ էղա վըր ընծիկ, հ՝էլա էկա, ասի՝ էրթամ տեսնամ թագավոր զիս հ՝որին է կանչի։ Էկեր իմ հըմկա կասիս՝ «Տարեք զէգոբ գլուխ զարկեք»։ Կտանեն, թըղ տանեն, դու դինաս։

Օր հրմալ ասեց Զորան փաշեն, ասեց.—Հայդե՛, Զորան փաշեն հրրես բաց իմ քաղքի մեջ փաշութեն պիտի էնե, օղորդ, անուն իմս է՝ թագավորութենեն, բըլե խոսքն ու գործք Զորան փաշին պիտի էղնի։

Եբ զԶորան փաշին էրեց վըր ուր քաղքին փաշա ու մեծ, ըստհաղ ճամբեց, ղէն յոթ փաշենն բերեց, թալեց ծով, օր հեղրմ լէ խրատ էղնի ուր մարդեր, ղիրարու ֆասադութեն չէնին։

Էդ քաղքի մեջ մարդըմ կեր, հ՚ըմեն օր կէրթեր ձուկ կբռներ, կբերեր թագավորին։ Իմալ էղավ օրըմ պատավ մեռավ։ Էդ բալըղչուն մեկ ու ճար տղեմ՚ կեր. եբ ուր պապ մեռավ, մամն ասեց ուրեն.

— Լառ՛, ախբր մղիկ ապրուստ պետք է, նստելով չէղնի, հ՚էլի վերցու զքու պապու թոռ, գնա ձուկ բռնե, զմբր իդարեն էնինք, ընծիկ օր լսիս՝ զքու պապու սանյաթն չկորցուս։

Տղեն ասեց.—Աղեկ կասես, բանըմ չըմ ասի, մենակ դու դինաս, օր առանց թղթի ձուկ չթողին մարդ բռնե, հ՚էլի գնա մըտ Զորան փաշեն, թուղթըմ առ էկո, հ՚էլնիմ էրթամ ձուկ բռնիմ։

Մամն է՝ հ՚էլավ գնաց Զորան փաշի մոտ, հ՚ընկավ օտք ու ձեռք, թուղթըմ հանեց, բերեց տվեց տղեն։

Տղեն օր զէդ թուղթ էձդեց ձեռք, հ՚էլավ լուսուն շուտ, առավ զուր թոռն ու նստավ քյալաքըմ, քշեց վըր ծովումն։ Հարի հ՚իրկումն զարկեց զարկվավ, մեկ ձուկ հ՚ընկավ ձեռք, հ՚իրկուն օր առավ ղէդ ձուկ կիգեր տուն, թագավորի ախչիկն տեսավ, ջառիեն ասեց.—Ջառիա, ջառիա, գնա, էդա տղեն օր ձուկըմ բռներ է ձեռք ու կէրթա, թոռ լէ դրեր է վըր փեճին, կանչե թըղ հ՚իգա հ՚ոդա։ Ասե. «Թագավորի ախչիկ կկանչե զքզիկ»։

Ջառիեն գնաց, զտղեն կանչեց, առավ էկավ թագավորի ախչկա մոտ։

Ախչիկն օր տեսավ զտղեն, տղեն մաներ պատվերք[1], էնքան օր խորոտիկ էր, աչքն հ՚ընկավ տղեն։ Ասեց.—Տղա, տղա, էդ ի՞նչ է քու ձեռք։

Տղեն ասեց.—Ձուկ է։

— Կծախե՞ս։

— Հա, կծախեմ։

---

[1] Իմա՝ պատկերք (Ս. Կ.)։

— Օր կծախես, դիր հ'ոդա, գնա՝ սառաֆ թըղ իտա զգին,— դառցավ ջառին ասեց.—Ջառիա, ջառիա, առ զէդա աղեն, տար մըր խազինդարի քով, ասա թագավորի ախչիկ ձուկըմ առեր է էդա տզից, կասե՝ էդա խըդար փարա թըղ իդա էդ տղին։

Ջառիեն առավ զտղեն ու դեմ գնաց խազնդարի քով, ասեց.— Թագավորի ախչիկ կասե՝ «էրկու օսկի թըղ իտա էդա տղին, էրթա»։

Սառաֆն ասեց ջառիին.—Դու գնա, ես կիտամ։

Ջառիեն օր թողեց հ'էլավ դուրս, սառաֆն էրկու չափալախ զարկեց տզի հ'էրես, կրակ տվեց, ասեց.

— Լաո՛, դու լէ՞ էդա հըմլա տեղրանք կօլըրդի՞ս։

Հանեց էրկու պըլիկ տվեց տզի ձեռքն ու ասեց՝ դը գնա։

Տղեն քերեց զուր պոճոճակ, դառցավ էկավ ուր տուն նստավ։

Տղեն օր դառցավ էկավ տուն, մամն հարցուց, ասեց.

— Լաո՛, հ'էսօր ինչ ի՞ս աշխատի։

Տղեն ասեց.—Քու տուն ջինվի ու քու աշխատելուն, իմ պապու արհեստն օր կասեր էդ է, թո ես էլ էդ արհեստի հ'ետևեն չըմ էրթա։

Մնաց լուսուն օր էլան, մեկ լէ մամն ասեց.—Լաո՛, էկո զքու հոր սանյաթն մ'կորցու, ընծիկ անկաշ էրե, հ'էլի վերցու ղքու թոռըն ու գնա։

Տղեն մեկ լէ պեչարա էղավ, հ'էլավ վերուց զթոռն, կախեց զուր գլուխն ու գնաց ուր գործուն։

Գնաց, հարի հ'իրկուն թալեց րոնեց, մեկ ձուկ հ'ընկավ ուր ձեռք։

Տղեն ասեց.—Էդա ձուկ հ'էսօր ընծիկ ու իմ մամուն հերիք է, կտանեմ մղիկ, չըմ ծախի։

Հ'էլավ առավ զուր ձուկն ու էկավ. օր մոտեցավ քաղքին, զուր ճամբախ օլրեց, ախչկա փանջարի տկով չգնաց։ Չէ, ախչկա սիրտն հ'ընկեր էր տղեն, աչք փրցեր էր ճամբախ, թե՝ ե՞ր կիգա։ Եր տղեն զուր ճամբախ օլրեց, ախչիկ ճամբեց զուր ջառիեն։ Ասեց.—Գնա, զէնա տղեն առ էկո։

Ջառիեն էկավ, առավ զտղեն, էկավ, հ'էլան թագավորի ախչկա մոտ։

Տղեն օր էկավ հ'էլավ մրտ ախչիկ, ախչիկն հարցուց, ասեց.

— Տղա, էդ ի՞նչ է քու մոտ։

Տղեն ասեց.—Ձուկ է։

Ախչիկն ասեց.—Զէդ ձուկ դիր իտա տեխ, ջառիի հետ գնա՝ սառաֆ էրկու օսկի թըղ իտա քզիկ։

Ջառիեն հ՚ընկավ տղի հ՚առջև, առավ էկավ սառաֆտարի մոտ. ասեց.

— Թագավորի ախչիկն կասե. «էրկու օսկի թըղ իտա էդա տղին էրթա»։

Ջառիեն հ՚էլավ դուրս, սառաֆտարն էրկու աղեկ չափալաղ հ՚իջուց տղի վրզքոքին, ասեց.—Լաո՛, ղո՞ւ լէ հըմլա տեղրանք կօ-լըրդիս։

Էրկու պըլիկ տվեց ձեռք, ճամբու դրեց գնաց։

Տղեն քերեց ղուր անկճի կոթ, թողեց էկավ ուր տուն։

Մամն մեկ լէ ասեց.—Լաո՛, հ՚էսօր ի՞նչ իս աշխատե։

— Կուռատալ իմ աշխատե, ի՞նչ իմ աշխատի,—ասեց տղեն, —ղիմ գլուխ կտրին, էլ էդ սանյատի հ՚ետևեն չըմ էրթա։

Մամն ասեց.—Լաո՛, չըմ դինա, քու պապ կաշխատեր, պու-տըմ ծաղկի պես կպահեր ղմղիկ, դու կփախնիս, հ՚որի՞ն, բան մը չըմ հասկնա քինե։

Պառկան քնան, հ՚էլան լուսուն.—Ի՞նչ էնիմ, ի՞նչ չէնիմ։ Մամն ասեց.—Լաո՛, ինչ էնիս՝ հ՚էլի, գնա քու պապու սանյաթի հ՚ետևեն։

Տղեն է, քերեց զանկճի կոթ, հ՚էլավ, առավ զուր թոռն, հա-ցըմ, էրկուս լէ կապեց մեջք, քշեց ծովու պըռուկ, հարի հ՚իրկուն զարկեց, զարկվավ, մեկ ձուկ հ՚ընկավ ձեռք։

Ասեց ինքն ուրեն տղեն. «Վահտ էղնի օր ես հ՚էսօր թագավորի ախչկա դիով չէրթամ քաղաք, ուրիշ դիով պիտի փաթիմ էրթամ մտնիմ մըր տունն»։

Բռնեց ճամբախըմ օր կիգեր։ Թագավորի ախչիկ հ՚ետևանց տեսավ, կանչեց զբեսլամեն, ասեց.

— Գիդի, տղեն ղճամբախ օլրեր է, ուրիշ դիո՞վ չըմ գինա, մոլրե՞ր է չըմ գինա, վազե բռնե առ էկո։

Բեսլամեն է, վազեց գնաց, առավ տղեն ու էկավ, էկավ մեկ լէ թագավորի ախչիկն ասեց... (Զէ, դիներ օր հ՚ըմն օր մեկ ձուկ կբերեր տղեն)։

— Տղա, զձուկ դիր հ՚ոդա, ջառիի հետ գնա, սառաֆտար էր-կու օսկի թըղ իտա քզիկ։

Տղեն դրեց զձուկ էնտեխ, հ՚ընկավ ջառիի հ՚ետևեն էկավ, էկավ սառաֆտարի խեչ։

Ջառիեն ասեց սառաֆտարին.—Թագավորի ախչիկ կասե, էրկու օսկի թըղ իտա էդա տղին։

Սառաֆտարն ասեց.—Աղեկ, գու գնա, ոս կիտամ։

Ջառիեն, օր թողեց էկավ, սառաֆտար մեկ լէ էրկու չափալախ էկավ տղի հ'էրես.—Էղավ էրկու հեղ կասիմ քզիկ,—ասեց,—դու անկաճ չըս էնի։ Դու լէ՞ հըմլա աղեկ տեղրանք կօլըրտիս,—էրկու պլիկ տվեց ձեռքն ու ճամբըցուց։

Տղեն մեկ լէ փոռ փոշման թողեց, դառցավ էկավ ուր տուն նստավ։ Օր էկավ ուր տուն նստավ, մամն վերցուց ասեց.—Տղա՛ լաո՛, հ'էսօր ի՞նչ իս աշխատի։

Տղեն ասեց.—Բանըմ լէ չըմ աշխատեր ի, ուխտ ու պայման էղնի հ'առշև աստծուն, հեղըմ լէ զէն թոռի պոչ չբռնեմ։

Մամն ասեց.—Շատ աղեկ, բալըղչութեն չըս էնի, յա ի՞նչ կէնիս։

— Ի՞նչ կէնիմ, խոմ աշխրքի ապրուստ վըր բալըղչութենին չէ՞, կէրթամ թյուճրիցըմ հաղար խըռոշ փարա կառնիմ, կէրթամ չարչութեն կէնիմ ընծիկ։

Մամն ասեց.—Քու քեֆ գինա, ես էլ լախա չունեմ։

Հ'էլավ ուրեն գտավ թյուճարըմ, առավ հազար խըռոշի ապրանք, նստավ թաղ գլուխըմ ու ուրեն չարչութեն կէներ։ Օրըմ, էրկուք թագավորի ախչիկն իշքեց, տղեն չէրևաց, կանչեց ջառիեն, ասեց.—Ջառիա՛, քու աստծու խաթրի համար էղնի, կառնա՞ս զէն տղեն գտի, ըրի՛ ընծիկ։

Էդ ջառիեն հ'ընկավ քաղքի մեջ, տեխ չմնաց օր չիշքեց, զումուտ կտրեց, օր դառձավ կիգեր, էկավ թաղ գլխեմ' կընցներ, տեսավ տղեն նստուկ է հ'ոդի։ Օր զտղեն գտավ ջառիեն. տղին ասեց.

— Տղա՛, լաո՛, թագավորի ախչիկ օր քզիկ էրկու օսկի կիտեր, դու չըր կշտաներ, էկար էդա տեխ, էդա չարչութենով իմա՞ լ պիտի կշտանաս։

Տղեն կասե.—Աստված զքու տուն ավիրե, զթագավորի ախչկան լէ վրեն, իրեք օր աշխատեր իմ վեց լէ չափալախ իմ կերի, առեր իմ վեց պլիկ փարա, ի՞նչ էրկու օսկի է, ի՞նչ հալ է, չըս հավատա, հանտե հ'ոդա, առ տես։

Ինչ էրեց չկառցավ զտղեն բերեր։ Դարձավ էկավ թագավորի ախչկա մոտ, ասեց.—Ջասիս, սառաֆտար զտղեն խըռդրցուցեր է մինե, ընծիկ օր ասեր է՝ գնա, կիտամ էրկու օսկի, թըղ էրթա, զիս խաբեր է, հաներ է դուրս, էրկու-էրկու չափալախ զարկեր է տղին,

էրկու պլիկ տվեր է ձեռք, ճամբրցուցեր է, ինչ կէնիմ՝ չի գա, ուրին բրոներ է շարչում՝ դյուբան, նստեր է շարչութեն կէնե։

Թագավորի ախչիկն ասեց.—Դու զէն մ'ասի, տղի տեխն նշնեցիր, օր հեղմ՝ լէ չկորցուս։

Ջառիեն ասեց.—Հա՛, նշնեցի, ֆըլան թաղի գլուխ նստուկ է, շարչութեն կէնե։

Ախչիկն ասեց.—Օր հրմալ է, գնա տղին ասե. «Թագավորի ախչիկն կասե. կըրնա ալիշ-վերիշ էնե, թե օր կըռնա, փարեն հ'իսնե, ալիշ-վերիշ էնիլն հ'ուրնե»։

Ջառիեն հ'էլավ էկավ տղի մոտ, ինչ օր թագավորի ախչիկն ասեր էր, ասեց տղին։

Տղեն ասեց.—Հ'ո՞րի չէ, ինք կըռնա զփարեն թըղ ճամբե. ալիշ-վերիշն էնիլն իմ վրեն։

Ջառիեն զառձավ էկավ թագավորի ախչկան ասեց.—Տղեն կասե՝ կառնամ։

Չէդ օր լսեց թագավորի ախչիկն, ճամբեց զջառիեն սառաֆտարի մոտ, ասեց.—Գնա՛, ասե թագավորի ախչիկ փեճկիրըմ օսկի կուզե։

Ջառիեն հ'էլավ գնաց սառաֆտարի մոտ, ասեց.—Թագավորի ախչիկ փեճկիրըմ օսկի կուզե։

Սառաֆտար լըցեց փեճկիրըմ օսկի, տվեց շառիեն առավ էկավ, բերեց տվեց թագավորի ախչիկն։ Ախչիկ լէ տվեց շառիեն, ասեց.—Տար տուր տղեն, ասե.—«Թագավորի ախչիկն կասե հոկցա ամիսըմ առուտուր թըղ էնե, ես կիգամ էնտեխ, գլուխն կվերցունք, քարն կկիսինք, կեսն՝ ընծիկ, կեսն՝ ուրին։

Ջառիեն վերուց զօսկիք, առավ, տարավ տվեց տղին։

Տղենն է, ամիսըմ ալիշ-վերիշ էրեց, ամիսն օր թրմավ, թագավորի ախչիկն ճամբեց զուր ջառիեն, ասեց.—Գնա տղին ասե, դիով չէրթա, չէղնի փակե զուր տուքնի դուռ, էրթա տուն, թըղ մնա էն տեխ, հ'իրկվան սահաթ իրեքին կիգամ, կկիսիմ զիմ վաստակ։

Տղեն ասեց.—Թը՛ղ էղնի, վըր իմ գլխուն, վըր իմ աչքին, չըմ էրթա, ի՞նչ վախտ կիգա, թըղ հ'իդա, ես հ'ոդա իմ։

Սահաթ իրեքն օր էղավ, մութ առավ զգետին, թագավորի ախչիկն է, հ'էլավ զջառիեն տվեց հ'առեջ, գնաց թաղ գլուխ, գտավ զտղի տուքան, բարև տվեց, տղեն հ'էլավ հ'առեջ կանավ, խաբուլ չէրեց, ասեց.—Նստի՛,—մեկտեխ նստան։

Օր նստավ խրլրսավ, ասեց.—Տղա՛, ինչ իս շահվի իմ փարի մեջ։

Տղեն ասեց.—Աստված հազար խեր իտա քզիկ, չորս-հինգ հազար խուռուշ շահվեր իմ։

Ախչիկն ասեց.—Թը՛ղ էղնի։

Տղեն գնաց օր զփարեն բերեր, ախչիկն ասեց.—Կանի՛։

Տղեն կանկընավ, գիցավ ուրին ուրիշ բանըմ կասե։

Ասեց.—Տղա՛, գինաս իմ սիրտ հ՚ընկեր է քի, ալեգա փարեն օր տվի բանցըներ, տվի օր քու սիրտ չկտրեր հ՚իսնե, էն մեկ էրկու օր, օր դու չըր էկեր, ես գինենք աշխարհք իմ վրեն մթներ է, հար զքզիկ տվի գտնել, իմ հոգու կես գնաց, մնաց կես։ Հըմկա իմալ օր ասի, ես զէգ փարեն մախսուա իմ տվի քզիկ, օր մըր օտք բացվի, էրթանք մըտ հ՚իրար, հ՚իգանք։ Ես կուզիմ առնիմ զքզիկ։ Առտուն կասիս քու մամուն լանկառիմ՝ եմիշ թըղ առնե էրթա Զոբան փաշի մոտ, ասե. «Փաշա՛, աստված զքզիկ հ՚էրկեն արև էնե, իմալ օր բռնիր զիմ տզի ձեռք, թուղթըմ տվիր, օր բալըղչութեն էնե, հըմկա իմ տղեն քու հ՚էրեսեն շատ խեր է տեսի, հիվի կէնիմ քինե, օր թուղթըմ իտաս ու տեխըմ նշանց էնիս տունըմ շինինք մզիկ»։ Դու մ՚վախենա փարից. Զոբան փաշեն օր ամր տվավ, մեկին՝ էրկուա կիտա, էդա քաղքի մեջ ինչ խըդար իրզատ ու բընա կա, կդարձուա վոր քզիկ, բաշլամիշ կէնիս, տուն կշինիս քզիկ, մեկ էղնի մասրաֆ, էրկուա կիտամ։

Տղեն էկավ ախչկա ասածի պես, թարիֆ էրեց մամուն։ Մամն է, հ՚էլավ լուսուն սինիմ՝ զարդարեց լիք-լիք եմիշներով, առավ ու քշեց դեմ Զոբան փաշի մոտ։ Փաշեն օր տեսավ զկնիկն, հարցուց ասեց.—Էդ ի՞նչ կնիկ է։

Էն տեխ էղնոդներ ասին.—Բալըղչու կնիկն է։

— Ի՞նչ կուզե։

Ասին.—Կասե՝ իմ տղեն հ՚ուրնէ շատ է խեր տեսի, էկեր իմ կխնդրիմ օր թուղթըմ իտա, էրթանք մզիկ տունըմ շինինք։

Զոբան փաշեն ասեց.—Թը՛ղ էղնի։

Կանչեց յազիճիմ՝, հրաման էրեց, օր թուղթըմ գրե, իտա բալըղչու կնկան, էրթան ուրանց տունըմ շինին։

Գրին, տվին, մամն առավ բերեց, տվեց տզին։

Տղեն օր զթուղթն տեսավ, էղավ աշխրքով, ինչքան իրզատ ու բընա կեր էդ քաղքի մեջ, զրմեն էլ բռնեց, փարան բաշլանմիշ

էրեց, թալեց վթամալ, քոշքըմ չինեց, որ թագավորի քոշք լէ հըմալ չէր։

Ժամանակըմ հ'ընցավ, ախչիկն հ'էլավ զշառիեն ճամբեց, ասեց.—Գնա՛, տե՛ս, տղեն զքոշկ խըլըսե՞ր է, չխըլըսե՞ր է։

Ջառիեն գնաց, տեսավ որ խըլըսեր է, դառձավ էկավ թագավորի ախչկան ասեց.—Խըլըսեր է։

Մեկէլ որ ճամբըցուց, փեճկիրըմ օսկի տվեց, ասեց.—Ա՛ռ, գնա, տուր տղին, ասե՝ շուտ թըղ հ'էլնի էրթա տուքնեն ուր տուն, թաղարուկ տեսնա, հ'էսօր ես պիտի հ'իգամ ուր տուն։

Ջառիեն առավ, էկավ ղօսկիք տվեց տղեն, ասեց.—Թագավորի ախչիկն հըմլա կասե։

Տղեն ասեց.—Շա՛տ աղեկ։

Կէղնի հ'իրկուն։ Շուտ փակեց ղտուքնի դուռ, ինչ որ պետքն էր առավ հետ, գնաց։ Սահաթ իրեքին էղավ, մեկ էլ տեսավ դուռ զարկին. հ'էլավ տեսավ որ թագավորի ախչիկ։ Բացին ղդուռ, էկան ներս։ Բարև տվեց, առավ զբարև։ Հ'էլավ կանավ հ'առջև, ասեց՝ նստի, մեջտեխ նստան։

Եբ նստան խըլըսան, ախչիկն ասեց տղին.—Բումբարա՛ք էղնի, բարո՛վ վիլիս, քու տներ շա՛տ աղեկ ին էղի։

Եբ ղտներ շնորհավորեց, դառձավ տղին ասեց.—Տղա՛, լուսուն կէլնիս, սինիմ՝ կզարդարիս, կիտաս քու մամու մոտ, ճամբիս էրթա Զորան փաշի մոտ։ Կճամբիս էրթա, կասի. «Ես էկեր իմ քու մոտ, ախը՞ր, իմ տղին պապ չկա, զքզիկ դրեր իմ տղի պապու տեղ որ ղթագավորի ախչիկն հ'ուղիս իմ տղին»։

Տղի անուն ղաթի հ'էլեր էր. որն որ տեսներ, մատով կցուցաներ, էն կասեր՝ բալըղչու տղեն, էն կասեր՝ բալըղչու տղեն։

Լուսուն որ էղավ, ախչկա ասածի պես, տղի մամ հ'էլավ, աղեկ սինիմ՝ պատրաստեց, կանչեց համալըմ, դրեց վըր գլխուն, էձգեց հ'առեջ առա քզիկ, Զորան փաշի տուն հ'ո՞ւր իս, էկա քի։ Գնաց զարկեց ղդուռ, հ'էլավ վի։ Զորան փաշեն որ տեսավ, չէ՞ հեղըմ էրկու տեսեր էր, կճանչըներ, ասեց.—Հարցուցեք, տեսնամ բալըղչու կնիկ մեկ լէ հ'որի՞ն է էկի։

Հարցուցին, վերուց ասեց.—Վերև աստված, ներքև զինք, ինք ճանչըցի մղիկ տեր, իմ տղին պապ չկա, զինք դրեր իմ տղի պապու տեխ, էկեր իմ ուր մոտ, որ էրթա թագավորի ախչիկն հ'ուղե իմ տղին։

Զորան փաշին ասին ուր խուլմըներ, թե հրմլա կասե։

Փաշեն ասեց.—Ես բան չըմ ասի, օղորդ է էդա քաղքի մեշ քու աղի պես տղեմ՝, քու տան պես տունըմ չկա, բըլե քիչըմ կքշվամ թագավորից, վախենամ չորե դիս, թը չէ՝ չէ՛։ Կէրթամ, վիրն օր լէ իտա զուր ախչիկ, քու տղի պես տղիմ՝ չի տա։

Կնիկ շատ լալուճկավ Զորան փաշի հ՝էրսնվե։ Ասեց՝ կէրթա՛մ։

Հ՝էլավ հագավ զուր օտնամանները ու քշեց դեմ թագավորի .սարեն։

Գնաց թամանա զարկեց ու կանավ։

Թագավոր ասեց.—Զորան փաշա, հրամե նստի։

Զորան փաշեն ասեց.—Զը՛մ նստի։

Թագավորն ասեց.—Հ՝ո՞րի չըս նստի։

Ասեց.—Ես էկեր իմ հ՝ըռճեմ՝ կէնիմ քինե, հար օր խաբուլ չէնիս, չըմ նստի։

— Ի՞նչ է քու հ՝ըռճեն, ասե։

Ասեց.—Ես էկեր իմ զքու ախչիկ կուզիմ բալըղչու տղին։ Օր խոսք կիտաս՝ կնստիմ, թը չէ՝ կդառնամ էրթամ, թագավո՛ր ապրած, ինք լէ գինա օր բալըղչու տղի պես տեսքով, տեղչակ ի զանկին տղեմ՝ չկա էդա քաղքի մեշ, զուր ախչիկ վիրն օր իտա, հրմալ տղիմ՝ չպիտի կրնա տա։

Թագավորն վերուց ասեց.—Զորա՛ն փաշա, դու իմա՞լ զիմ ախչիկ լայեղ կտեսնաս բալըղչու տղին, չէ՞ օր հ՝էրեկ լէ էդոր հեր իմ բալըղչին էր, ես իմա՞լ զիմ ախչիկ իտամ իմ բալըղչու տղին։

Զորան փաշեն ասեց.—Ի՞նչ կա, ես լէ հովիվմ՝ ենք, էկա էդա տեխ, էղա փաշա, բալըղչու տղեն մարդ չէ՞, էն օր հ՝էսօր էնդոր քոշք ու սա.բեն զքում բանձր է, ուր պես տղեմ՝ էդա քաղքի մեշ չըս կրնա գտնի, ի՞նչ կա։

Թագավորն ասեց.—Զը՛նք իտե, բըլե էնի խուրբան թըղ էղնի քզիկ, հեղըմ ասեր իմ՝ անունն իմն է, խոսքն ու գործ՝ քում։ Հըմկա ախչիկըմ հ՝ապով ես զքու խաթր պիտի կոտրի՞մ։ Ախչիկըմ էր՝ խուրբան էրի քու օտներու տակ. տվի, գնաց։

Էդ հրմալ օր ասեց, Զորան փաշեն վազեց ու ղթագավորի ձեռք պադեց։

Խոսքն օր առավ խըլըսավ, տղի մամ հալա Զորան փաշի տուն էր, կիշքեր հար ի խոսքըմ բերեր, էկավ ասեց.—Պառա՛վ, հ՝ուզեցի, խոսք առա, խոսկապ դրի՝ ու էկա։ Գնա զքու թադարուկ տես օր զհարսնեք բըռնես։

Պառավն դառձավ, էկավ տղին ասեց.—Լառ՝ ուզեցի, զնշան դրի ու էկա։

Տղեն ասեց.—Շա՛տ աղեկ։

Ջուհար տվեց թագավորի ախչկան, թե՝ ուզեցինք փրցանք, թագավոր խոսք տվեր է։

Տեսան ղթաղարուկ, խըլըսան, բռնեցին զհարսնեք, յոթն օր գիշեր ու ցերեկ զարկին ու խաղցան։

Հարսնեք օր ֆըրղան, մեկտեխելու գիշերն է, հ'իրկուն օր թալին տեխ, տղեն ու ախչիկն էկան կպառկեն հ'իրարու խեչ, տղեն ղձեռք թալեց ախչկա վզով, վրեն կխնտաներ ու ղէրեսն կպագներ, ախչիկ հա՛յ-հա՛յ ճըլօթըմ էկավ տղի հ'էրեսն ու յարանութենով ասեց.

— Հե՛յ, բու բալըղ քյալասի դեյիլ, սուլթան քյալասի դըր՝։

Ախչիկն օր հըմալ ասեց, տղի սիրտ չմնաց, գիտցավ սրտեն ասեց. հ'էլավ հագավ զուր շորեր՝ իլայի կէրթամ։

Ախչիկն հար ինչ լեզու բանցուց, չէղավ, օտք ընկավ, ձեռք ընկավ.—Ես խալթմ՝ էրի, իմալ օր դու կխընտաներ վըր ընծիկ, ես լէ վըր քզիկ խնդացի,—անկարելի էղավ։ Հար ի կես գիշեր, ախչիկ յալվար էղավ, տղեն անկաճ չէրեց ու զուր հալվըներ չհանեց, մնաց մոմղրվուկ պատներ։

Ախչիկն է ջանդարդի էղավ, քուն տարավ, պառկավ քնավ։

Ախչիկ օր քնավ, տղեն հ'ուշիկըմ բացեց զդուռ, էկավ թաղ գլուխ խավախանե մը բաց կեր, խավե մը խմեց, տեսավ օր Մսրա կյամիք կանուկ ին ծովու պըռուկ, քիշըմ վերջ պիտի էրթան, նըստավ կյամու մը մեջ, ասեց.—Ցալա՛,—ասեց,—քզիկ Մսրը, դո՞ր իս, էկա քի։

Տղեն զարկեց, էկավ Մըսրը հ'էլավ դուրս ու էդ տեխու փաշի հ'առջև էղավ մշակ։ Ջինք դրեց լալ ու կրռ, նը՛ կխոսեր, նը՛ կըլսեր։ Տղեն թըղ մնա հ'ոդի, մինք դառնանք վըր ախչկան։

Ախչիկն է, լուսուն հ'էլավ, տեսավ օր տղա չկա. փոշեմնավ զուր խոսք օր ասեր էր։ Տփեց չոքին.—Հե՛յ վախ, ես ի՞նչ էր էրի։

Կանչեց ջառիեն, ասեց.—Հ'ընկի էդա քաղքի մեջ, տեսնամ չըս կառնա զէդ տղեն գտնա։

Ջառիեն զարկեց էկավ թաղ գլուխ, խավեն մտավ։

Խավաճին հարցուց ասեց.—Ի՞նչ կիշքես։

---

[1] Սա ձկան գլուխ չէ, սուլթանի գլուխ է (Ծ. Բ.)։

Ջառիեն ասեց.—Մեկմ՝ իմ կորցուցի, կփնտրիմ։

Ջառիեն օր սալբխեց զտղեն, խահվաջին ասեց.—Ջասի՞ս, օր լուսումութ տղեմ՝ էկավ էդա տեխ, այնան քու ասածի պես, խմեց զուր խահվեն, Մսրա կյամիք կանուկ են հ՝ոդա, մտավ մեջ, յալա՜ Մսրը՝ էկա քի։

Խահվաջին օր հրմալ ասեց, ջառիեն դառձավ, էկավ ախչկան ասեց.—Քու նշանլուն գացեր է Մրսրը։

Թագավորի ախչիկն ասեց ջառիեն.—Ջառիա, դու ու քու աստված, ղմրը խազքութեն մարդ չհասկնա, կեսրոջ լէ թամբիհ էրե դուրս չխոսա։ Հ՝էլավ ախչիկն է, կյամի մը շինել տվեց, դուրս ու ներս աղեկ աղրութ ու զրմրութ քարերով նխշեց,-իրեք տարուց նոր բերան էկավ թամամավ կյամին։ Կյամին օր թամամ էղավ, հ՝էլավ ուր քառսուն ջառիաներով հագավ մարգանակ ջոր ու մտավ կյամին։ Կյամին օր մտավ, զգլուխ թողեց.—Հ՝ո՞ւր իս Մրսրրա քաղաք, էկանք քի,—ասին ու գացին։

Կյամին հ՝ընկավ վրը ծովուն, հա՜ հ՝ոդա, հա՜ հ՝ոնա, ամիսըմ թամամ օլրրդան, գացին Մսրը հ՝էլան դուրս։

Էգ կյամին է, օր Մրսրը հ՝էլավ դուրս, ձեն գնաց Մրսրրա փաշին թե.—Ջասի՞ս օր կյամիմ՝ է էկի հ՝էլի մրը հողի մեջ դուրս, արևու պես լուս ու փելք կիտա։ Էդ կյամու մեջ քառսուն խորթ կան, էն կասե՝ ես իմ, էն կասե՝ ես իմ։

Մսրա փաշեն զէդ օր լսեց, հ՝էլավ առավ զուր օտք ու ձեռք ուր հետ, ասեց.—Էրթանք էդ կյամու տեսութեն։

Էկավ հ՝էլավ կյամու մեջ օլրրտավ։ Տեսավ օր օղորդ կյամիմ՝ է իսկի ուր ամսալ չուզե։ Օլրրտավ կյամու մեջ, էկավ էդ քառսուն ջրհելներու խեչ բարև տվեց, բարև առան ու հարցուց.—Դուք ի՞նչ մարդ իք, հ՝ո՞ւսդեն կիգաք, հ՝ո՞ւր կէրթաք։

Էդ ջրհելներու գլխավորն՝ թագավորի ախչիկ, վերուց ասեց.—Ես ֆրլան թագավորի տղեն իմ, էկեր իմ հ՝էրկրներ կօլրրտիմ։

Փաշեն ասեց.—Շա՜տ աղեկ, էկեր իս բարով ու խերով իս էկի։

Էդ տղեն լէ հանդ էր կանուկ, փաշի հ՝առեջ խրզմաթ կէներ. կրակ կտաներ, կրակ կբերեր, զինք դրեր էր լալութեն ու կրռութեն, մարդու հետ չխոսեր։

Ախչիկ օր տեսավ զտղեն, ճանչցավ, տղեն լէ ճանչցավ զախչիկ։

Ախչիկ վերուց ասեց.—Փաշա՜, էդա տղեն քու ի՞նչն է, հրմլա աչքը բաց խզմաթըմ կէնե, իմ սրտի մեջ շա՜տ մտավ։

Փաշեն վերուց ասեց.—Իմ մշակն է, աղեկ իրգմաթ կէնե, աչքը գաց է, բըլե էղավ էղա իրեք տարի իմ մոտն է, չխոսա, լալ ու կըռ է։

Ախչիկն ասեց.—Փաշա՛, էդ խոսքն օր կասիս, հըմալ չէ, թե օր կրռ էղնի՝ լալ չէ, լալ էղնի՝ կըռ չէ։ Վահլայի, լալ չէ։

Խոսքըմ էնդորնէ, ախչիկն օր զինք դրեր էր թագավորի տղի տեխ, ասեց փաշին.—Կիգա՞ս, ես ու դու վըր էդա տղին շարթ բռնինք։

Փաշեն ասեց.—Թը՛ղ էղնի։

Ախչիկն ասեց.—Փաշա՛, էկո զէդա տղեն հ'էսօր գիշեր թող իմ մոտ, թե օր հանեցի զտղեն լեզու, տուր ընծիկ, թե օր չհանեցի, էդա կյամին թըղ էղնի քղիկ։

Փաշի հ'առջևու մարդիկ ասին.—Փաշա՛, աղեկ կասե, թագավորի տղեն, իրեք տարի էղավ էդ տղեն մըր մոտն է, մինք գինանք օր լալ ու կըռ է, էդա հըմլա կյամի մը միլիոնով չշինվի, շարթ բռնե զէդ կյամին առնինք էդոր ձեռքեն։

Փաշեն ասեց.—Թը՛ղ էղնի։

Հ'էլավ զտղեն թողեց ախչկա մոտ ու ինք գնաց ուր տուն նըստավ։

Ախչիկն է առավ զտղեն ու նստավ, չուրի լուս ու մութ, ինչ շարա էրեց, զտղեն չկըռցավ հաներ լեզու։

Լուսուն փաշեն հ'էլավ ուր մարգերով էկավ, տեսնա թագավորի տղեն, զուր մշակ հանե՞ր է լեզու, թե չհաներ է։ Հ'էլավ էկավ, կանավ ծովու պռուկ, ասեց.—Թագավորի՛ տղա, զիմ մշակ հանի՞ր լեզու։

Ախչիկն ասեց.—Չէ՛։

Օր ասեց՝ չէ, փաշեն ասեց.—Թագավորի՛ տղա, կյամին հասա՞վ հ'իս։

Ախչիկն ասեց.—Հա՛, հասավ քի։

Փաշեն վերուց զտղեն կառներ կէրթեր։ Ախչիկն օր զինք դրեր էր թագավորի տղի տեխ, վերուց ասեց.—Փաշա՛, ախըր կյամին հասավ քի, էկո շարթըմ լէ բռնինք. բալքիմ զքու մշակ հանիմ լեզու։

Փաշեն ասեց.—Ի՞նչ բռնինք։

Ախչիկն ասեց.—Դու քու տղեն ու կյամին, մենք լէ մըր քառսուն գլուխ, թե օր զքու մշակ հանենք լեզու, քու տղեն ու կյամին

թըղ էղնի մղիկ, թե օր չկոցանք հանենք՝ մըր գլուխ զարկ։ Հալաք է քզիկ։

Փաշեն ասեց.—Շա՛տ աղեկ, դուք օր կասեք՝ թըղ էղնի։ Տղեն թըղ մնա ձըր խեչ, թե օր լեզու հանեք, ձըր կյամին կհասնի ձի, կառնեք զտղեն ու կէրթաք, թե օր չէ՝ զձեր քառսունի գլուխ լէ կզարկիմ, ձըր արուն հալալ է։

Փաշեն մեկ լէ թողեց զտղեն ախչկա խեչ, հ՝էլավ գնաց ուրտուն։ Ախչիկն մեկ լէ առավ զտղեն ու նստավ։

Ասեց.—Տղա՛, ես բանըմ էր ասի, փոշեմնա, մեղա՛ աստծու, ուխտ կէնիմ օր հեղըմ լէ հըմալ խոսք չասիմ քզիկ, էկո մըր արնի տակ մ՝մտնի, օր դու չխոսաս, լուսուն զիմ ու իմ շառիեսներու գլուխ կզարկին։ Էկո՛, էղա խույը թարկ էրե, խոսա՛. առնիմ զքզիկ ու զիմ կյամին, նստինք մըշ, էրթանք մըր հ՝էրկիր։

Զուրի լուսուն, ախչիկ ինչ օր էրեց, ախըր չկառցավ զտղեն լեզու հաներ։

Լուսումութ օր էղավ, փաշեն էկավ։

Ասեց.—Թագավորի՛ տղա, հանի՞ր զիմ մշակ լեզու։

Ախչիկն ասեց.—Չէ՛, իմ արուն ու իմ ընկերներուն հալա՛լ է քզիկ, տա՛ր, ինչ գինաս, էրե։

Փաշեն հրաման էրեց օր կանչին ղշալատչիք, զէգոնց գլուխ զարկեն։

Փաշի հ՝առշևու մարդն ասեց.—Փաշա՛, էդի թագավորի տղա է, թագավորի սըլսըլի վրեն սուր չվերցվի։

— Ցա՛, իմա՞լ կէղնի,—ասեց փաշեն։

— Պետք է կախարան շինենք, կախենք։

Ասեց փաշեն.—Թը՛ղ էղնի։

Բերին էրկու փետ տընկըցին ու բերին զչվան թալեցին օր կախեն։

Փաշեն ասեց.—Հ՝առշին հեղ պետք է զէդոնց մեծ կախենք, թագավորի տղեն, սորա՝ զմեկէլդոնք։

Ասին.—Թը՛ղ էղնի։

Բերին զշըրիտն սապոնեցին, թալեցին ախչկա վիզ ու էձգեցին փետ։

Ախչիկ լէ հ՝էլավ կանավ վըր աթոռքներուն, օր քաշին աթոռքներ օտաց տըկեն, կախվեր, խըղդվեր։ Էդ վախտ, տղեն լէ քաշեր էր զթուր, չէ փաշի լալ ու կրոն է, սիրանելի էր, գինեն թեինք լէ կուզե գլուխըմ կտրե, կէրթեր ու կիգեր։

Կապն օր թալին ախչկա բոկ ու զքուռսին քաշեցին, հա՜յ հա՜յ տղեն թուրըմ թալեց, ղշրիտն կտրեց ու զախչիկ բերեց ցած։ Օր կտրավ շրրիտ, ախչիկ պատավ ցած, տղեն վերուց, ասեց.— Է՜յ, բու բալըղ քյալասի դեյիլ, սուլթան քյալասի դրր*։

Զէդ օր ասեց, հ՚ըմնու ձեռքեր թուլցավ, փաշեն թասլիմ էրեց զտղեն ու ղկյամին ախչկան։ Թողեց, գնաց ուր տուն։

Ախչիկն է, առավ զտղեն, շատ օսկի լէ փեշքեշ, փաշեն նոր գիտցավ օր ախչիկ էր ու տղեն էդոր նշանլուն։ Տվեց զուր մարդիկ, նստավ կյամին ու հ՚ընկավ վրր ծովուն։

Տասն օր քշեցին, ուրանց քաղաք հ՚էլան ղուրս։ Կապեցին զուրանց կյամին ծովու պռուկ ու հ՚էլան առան զիրար, գացին ուրանց տուն։ Եր գացին տուն, ախչիկն ասեց տղին.—Տղա՜, դու հ՚ո՞րի զէդ բանն էրիր։

Տղենն ասեց.—Դու թագավորի ախչիկն էր, ես լէ բալըղչու տղեն։ Իրեք տարի դու ծրռար վրր ընծիկ, դու գիներ օր ես բալըղչում՝ տղա ենք, հ՚ո՞րի ղիս առար. օր առար, զէդ բան հ՚ո՞րի էրիր իմ գլուխ։ Հ՚ո՞րին ասիր՝ «Բու բալըղ բաշի դեյիլ, սուլթան բաշի գրր»*։ Օր հըմալ ասիր, ես ասի, էդի հ՚էսօր օր հ՚առջին օրն է հըմլա կասե, վաղ ի՞նչ չասե, յավաշ, ես թողիմ կորիմ, թըղ հ՚իգա իմ հ՚ետևեն, փնտրե գտնա՜, խելք հ՚իգա գլուխ, օր օր մը լէ հըմալ խալթ չէնե, ես օր հըմալ չընք էրի, դու շատ բան կէներ իմ գլուխ։

Նոր ախչիկն ու տղեն բարիշան հ՚իրարու հետ, ուխտ էրին, օրմը լէ, քանի սաղ ին, հ՚իրարու հ՚եվել-պակաս խոսք չասին. նստան կերան ու խմեցին, զաստված հիշեցին։

Աստծուց հ՚իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ էլ՝ անկաճ էնողին։

---

* Սա ձկան գլուխ չէ, սուլթանի գլուխ է (Ս. Կ.)։